

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերը	Հղումը
1	2	3	4
<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>1. Բարելավել համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետությունը, կատարելագործել ֆինանսական համահարթեցման մեխանիզմները՝ տարբերակելով համայնքներին ցուցաբերվող օժանդակությունը</p>	<p>ՀՀ պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրամադրվող համահարթեցման դոտացիաների տրամադրման նոր մեխանիզմների անհրաժեշտ օրենսդրական հիմքերի ստեղծում այն հաշվով, որ դրանք լինեն ավելի նպատակային, հաշվի առնեն համայնքների միջև առկա օբյեկտիվ տարբերությունները՝ հատկապես եկամտային ունակությունների և ծախսային կարիքների մասով</p> <p>գնահատել սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները, պարտադիր լիազորությունների իրականացման կարգերի, չափորոշիչների ու նորմատիվների ներմուծմամբ պայմանավորված դրանց դինամիկան</p>	<p>Եվրոպայի խորհուրդ- ՀՀ կառավարություն</p> <p>Գործողությունների պլան՝</p> <p>կապված տեղական ինքնակառավարման բնագավառի բարեփոխումների հետ (խնդիր 1)</p> <p>ԱՄՆ ՄԶԳ՝ զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագիր (N AAG-111-G-13-001)</p>
	<p>2. Համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի մեկնարկ</p>	<p>- խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների իրականացում</p> <p>- վարչատարածքային բարեփոխման իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակում և դրանք ՀՀ կառավարությունում քննարկելը</p>	<p>ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշում</p>

1	2	3	4
	<p>3. Քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերի, ինչպես նաև համայնքային ենթակայության հիմնարկների կառուցվածքի և կազմի օպտիմալ մոդելների մշակում</p>	<p>քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերի, ինչպես նաև համայնքային ենթակայության կազմակերպությունների հաստիքացուցակների ու համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց մասին տեղեկատվական բազայի ձևավորում</p> <p>քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերի աշխատողների առավելագույն թիվը սահմանելու վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը, ինչպես նաև համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատողների թվի օպտիմալացման վերաբերյալ մեթոդական առաջարկությունների մշակում</p> <p>քաղաքապետարանի (գյուղապետարանի) աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատողների նվազագույն աշխատավարձերի բարձրացմամբ պայմանավորված՝ 2014 թվականին անհրաժեշտ քայլերի ձեռնարկում</p>	<p>ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 16-ի N 515-Ա որոշում, կետ 3.5.1-ին</p> <p>ՀՀ կառավարության 2013 թ. հունիսի 27-ի N 661-Ն որոշում</p>
<p>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն</p>	<p>4. Տարածաշրջանային ինտեգրացում</p>	<p>- Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում</p> <p>- Վրաստան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման ծրագրի նախապատրաստական աշխատանքների իրականացում</p>	<p>ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ա որոշման 3.2.7.1-ին կետի 5-րդ ենթակետ</p>
	<p>5. Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի՝ լրացուցիչ ժամկետում շահագործման նախապատրաստումը</p>	<p>- Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և շինությունների գնման և մնացորդային ռետուրի գնահատման աշխատանքների իրականացում</p>	

1	2	3	4
ՀՀ բնապահպանության նախարարություն	6. Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրում	<ul style="list-style-type: none"> - Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների՝ գեղարքունի և ամառային իշխանի պոպուլյացիայի համալրման նպատակով 366.667 հազ. հատ մանրաձկան ամեցում և բացթողում Սևանա լիճ մեկ անգամ (2014 թ. 4-րդ եռամսյակ) 	«Սևանա լճի մասին» ՀՀ օրենք. (հոդված 12) և «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենք (N 2 հավելված, կետ 3, ենթակետ 3.21)
	7. «Սյունիքի մարզում կենսոլորտային տարածքի ստեղծում» ծրագրի իրականացում	<ul style="list-style-type: none"> - ծրագրի սկսման համար անհրաժեշտ նախապատրաստական միջոցառումների իրականացում, այդ թվում - ծրագիրն իրականացնող կազմակերպության ընտրության միջազգային մրցույթի կազմակերպում <<Արևիկ>> ազգային պարկի սահմանների ճշգրտում և քարտեզագրում - հարակից համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի ուսումնասիրություն և գնահատում 	ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2009-2010 թթ. ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետ
ՀՀ ֆինանսների նախարարություն	8. Մաքսային միությանն անդամակցությամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության մաքսային և հարկային օրենսդրության համապատասխանեցում Մաքսային միության մաքսային օրենսդրությանը	<ul style="list-style-type: none"> - Մաքսային միության մաքսային օրենսդրության մանրամասն ուսումնասիրություն - Մաքսային միության և Հայաստանի Հանրապետության գործող մաքսային օրենսդրության համադրում, առանձնահատկությունների բացահայտում, գույքագրում - Հայաստանի Հանրապետության մաքսային և հարկային օրենսդրությունը Մաքսային միության 	ՀՀ վարչապետի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի N 803-Ն որոշման հավելվածի կարգի 2-րդ բաժնի 5-րդ կետի 8-րդ ենթակետ

1	2	3	4
		<p>մաքսային օրենսդրության հետ համապատասխանեցնելուն ուղղված համապատասխան օրենսդրական նախագծերի մշակում</p> <p>- մշակված օրենսդրական նախագծերի քննարկում շահագրգիռ մարմինների և, ըստ անհրաժեշտության, նաև Մաքսային միության անդամ համարվող երկրների ներկայացուցիչների հետ, և դրա լրամշակում</p> <p>- օրենսդրական նախագծերը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը</p>	
	<p>9. Պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների շարունակում</p>	<p>- բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) կազմման մեթոդական ցուցումների լրամշակում և դրա կիրառման հետ կապված խորհրդատվության տրամադրում համապատասխան գերատեսչություններին</p> <p>- մեթոդական ցուցումներին համապատասխան փորձարարական 10 գերատեսչությունների կողմից իրենց 2015-2017 թթ. ՄԺԾԾ-ի հայտի հետ մեկտեղ յուրաքանչյուրը 1-ական բյուջետային ծրագրի նկարագիր (անձնագիր) ներկայացնելը</p> <p>- ոչ ֆինանսական ցուցանիշների համակարգի վերանայում և լրամշակում</p>	<p>ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի թիվ 515-Ա որոշման հավելվածի «3.2.3. Բյուջետային համակարգ» ենթաբաժնի չորրորդ պարբերության 2-րդ ենթակետի դրույթի կատարման ապահովում</p> <p>ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 27-ի N 48 արձանագրության N 48 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ պետական ծախսերի ծրագրավորման գործընթացի բարեփոխումների զարգացման հայեցակարգի դրույթների ապահովում</p>

1	2	3	4
	<p>10. ՀՀ պետական ֆինանսների կառավարման համակարգի գործունեության արդյունավետության մոնիթորինգի իրականացման համար հիմքերի ստեղծման նպատակով ՀՀ պետական ֆինանսների կառավարման արդի համակարգի որակի ամբողջական պատկերի ստացում</p>	<p>Հանրային ծախսերի և ֆինանսական ծախսերի հաշվետվողականության (ՀԾՖՀ) քարտուղարության որակի երաշխավորման գործընթացի պահանջները բավարարող ՀՀ պետական ծախսերի կառավարման համակարգի գնահատման հաշվետվության հրապարակում</p>	<p>ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ա որոշման հավելվածի «3.2.3. Բյուջետային համակարգ» ենթաբաժնի չորրորդ պարբերության 6-րդ ենթակետի դրույթի կատարման ապահովում</p>
	<p>11. Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքների իրականացում</p>	<p>- Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի հաստատում</p> <p>- հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի և դրա կիրառման հրահանգի քննարկում և հաստատում</p> <p>- հանրային հատվածի կազմակերպություններում գործող ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանից նոր հաշվային պլանին անցման ցուցումների հաստատում</p> <p>- հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականության</p>	<p>ՀՀ վարչապետի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի N 803-Ն որոշման հավելվածի կարգի 2-րդ բաժնի 5-րդ կետի 8-րդ ենթակետ</p>

1	2	3	4
		<p>օրինակելի մոդելի հաստատում</p> <p>- հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների գույքագրման անցկացման կարգի մշակում</p> <p>- հանրային հատվածի կազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման ուղեցույցի հաստատում</p> <p>- հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթի և դրանց լրացման ցուցումների մշակում</p>	
		<p>- հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվառման փաստաթղթերի և գրանցամատյանների օրինակելի և պարտադիր ձևերի մշակում</p>	
<p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>	<p>12. Ստեփանավանի և Կապանի օդանավակայանների վերագործարկում</p>	<p>- «Ստեփանավան» օդանավակայան» ՓԲԸ-ի և Կապանի օդանավակայանի վարչական շենքերի վերանորոգում և տարածքի բարեկարգում, ցանկապատում</p> <p>- օդանավակայանների թռիչքուղու վերականգնում</p> <p>- միջազգային ստանդարտներին համապատասխանեցում</p>	<p>ՀՀ կառավարության 2013 թ. օգոստոսի 29-ի N 932-Ա որոշում</p>

1	2	3	4
	13. Բնակչության ազդարարման համակարգի արդիականացում	<p>- այլ դոնորների միջոցներով հանրապետության տարածքում տեղակայված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 78 հրշեջ փրկարարական ջոկատների, մարզային փրկարարական վարչությունների և այլ ստորաբաժանումների, շենքերում օպտիկամանրաթելային մալուխների անցկացում, ազդարարման շջակների տեղադրում</p> <p>- բնակչության ազդարարման համակարգը կանոնակարգող իրավական դաշտի ձևավորում և համապատասխանեցում արդի պայմաններին, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1925-Ն որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարում ու բնակչության ազդարարման համակարգի արդիականացման և կապի նորագույն համակարգերի ու տեխնիկական միջոցների ներդրման ծրագրի մշակում և հաստատմանը ներկայացնելը</p>	<p>ՀՀ Նախագահի 2011 թ. դեկտեմբերի 27-ի ՆԿ-229-Ն կարգադրությամբ հաստատված հայեցակարգի 50-րդ կետ</p> <p>ՀՀ կառավարության 2012 թ. մայիսի 24-ի N 679-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետ</p>
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	14. Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի դերի կարևորում և տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում	1) ՀՀ 10 մարզի քաղաքային և գյուղական խոշոր համայնքներում նախադպրոցական հիմնարկների և դպրոցների տարրական դասարանների երեխաների միջև ֆիզկուլտուրային-առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումների՝ «Սպորտլանդիաներ»-ի անցկացում	ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 16-ի N 515-Ա որոշման 3.4.6.3-րդ կետ

1	2	3	4
		<p>2) անվանի մարզիկների հետ հանդիպումների կազմակերպում</p> <p>3) «Առողջ ապրելակերպ» թեմայով սեմինար-խորհրդակցությունների անցկացում</p> <p>4) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նշանակության քարոզչություն</p>	
	<p>15. Երիտասարդական պետական քաղաքականության մշակման շրջանակներում երիտասարդության մասնակցային գործընթացների խթանում և ինստիտուցիոնալ հիմքերի զարգացում</p>	<p>1) երիտասարդական պետական քաղաքականության նոր հայեցակարգի մշակում</p> <p>2) ՀՀ հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության առավել արդյունավետ մեխանիզմների ներդրում</p>	<p>ՀՀ վարչապետի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի N 803-Ն որոշում</p>
<p>ՀՀ սփյուռքի նախարարություն</p>	<p>16. ՀՀ սփյուռքի նախարարության և համահայկական կառույցների համատեղ ծրագրերի ընդլայնում</p>	<p>3-4 համահայկական կազմակերպության հետ հանդիպումների և կյոր սեղան-քննարկումների կազմակերպում, համահայկական ծրագրերի համադրում, համաձայնագրերի, պայմանագրերի թարմացում, նորերի կնքում</p> <p>- աջակցություն համահայկական կազմակերպությունների հայրենաճանաչությանը և հայապահպանությանն ուղղված ծրագրերի իրականացմանը Հայաստանում և սփյուռքում</p>	

1	2	3	4
		<p>- համահայկական կազմակերպությունների, սփյուռքի համայնքային կառույցների աշխատողների ու ներկայացուցիչների համար ուսուցողական և վերապատրաստման դասընթացների, տարածաշրջանային 2 համաժողովի կազմակերպում</p> <p>-ՀՀ սփյուռքի նախարարության և համահայկական կառույցների ծրագրերը ներկայացնող ճանաչողական և քարոզչական բնույթի նյութերի, տեսահոլովակների պատրաստում</p> <p>- գրքույկների և հեռուստահաղորդումների պատրաստում և տարածում սփյուռքում</p>	
	<p>17. Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման ծրագրերի իրականացում</p>	<p>- մասնակցություն սփյուռքահայերի ինտեգրմանը, սոցիալական, առողջապահական, կրթական, մշակութային խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի մշակմանը և իրականացմանը</p> <p>- աջակցություն Հայաստանի բուհերում և միջին մասնագիտական հաստատություններում սովորող շուրջ 400 սիրիահայ ուսանողի՝ ուսման վարձավճարի փոխհատուցմամբ</p> <p>- աջակցություն նախադպրոցական և դպրոցական տարիքի՝ սպասվող ներգաղթողների խնդիրների լուծմանը</p> <p>- Հայաստան տեղափոխված սփյուռքահայերի կողմից իրականացվող առնվազն 4 միջոցառման</p>	

1	2	3	4
		<p>օժանդակություն</p> <p>- 2 համերգային ծրագիր՝ սիրիահայ խմբերի, արտիստների, մանկապատանեկան տարիքի ստեղծագործողների մասնակցությամբ</p> <p>- աջակցություն Հայաստանում գործող սփյուռքահայերի հասարակական միավորումների՝</p> <ul style="list-style-type: none"> • «Իրաքահայերի ընտանեկան մշակութային միության», • «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի, • «Հալեպ» հայրենակցական, բարեսիրական միության <p>և այլ կազմակերպությունների հետ համատեղ հավաք-հանդիպումների կազմակերպում,</p> <p>-նպաստում «Նոր Հալեպ» թաղամասի բնակարանաշինության ծրագրի մեկնարկին</p>	
<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>18. Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատմանն ու բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում</p>	<p>1. Հայաստանի Հանրապետության հիվանդանոցային բուժօժանայությունների որակի ապահովման ռազմավարության մշակում:</p> <p>2. Պետական պատվերի իրականացման գործընթացում խախտումներ արձանագրած կազմակերպությունների համար հաջորդ տարվա համար պետա-</p>	<p>Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ա որոշման հավելվածի 3.4.2-րդ կետ, երկրորդ պարբերություն</p>

1	2	3	4
		<p>կան պատվերի տեղադրման սահմանափակումների սահմանում պետական պատվերի գործընթացը կարգավորող իրավական ակտի (ակտերի) ընդունման (փոփոխման) միջոցով:</p> <p>3. Պետական պատվերի տեղադրման պարտադիր պայմաններում նախորդ տարվա համեմատ վճարովի ծառայությունների աճի, միջին աշխատավարձի աճի և շահութաբերության ապահովման ցուցանիշների ներառում և դրանք չապահովելու դեպքում կազմակերպությունների գործադիր մարմինների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների սահմանում ՀՀ կառավարության որոշման ընդունման միջոցով:</p> <p>4. Պետական պատվերով, վճարովի և արտոնյալ պայմաններով բուժօգնության շրջանակները հստակեցնելու նպատակով պետական պատվերի տարեկան պայմանագրային գումարի շրջանակներում կազմակերպություններում բուժման ենթակա հիվանդների առավելագույն թվի որոշման և դրանից ավելի հիվանդների բուժումը վճարովի կամ արտոն-</p>	

1	2	3	4
		<p>յալ պայմաններով կազմակերպելու մասին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանի հաստատում:</p> <p>5. Վարձատրման դրույքային ու խրախուսական եղանակների համադրման միջոցով բուժանձնակազմի վարձատրման նոր սկզբունքների մշակում:</p> <p>6. Մշտադիտարկումների կազմակերպում՝ մատուցվող վճարովի ծառայություններից ստացվող եկամուտների և հարկային պարտավորությունների աճի ցուցանիշների ապահովման նպատակով:</p> <p>7. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող, ինչպես նաև վճարովի բուժառայությունների ցանկի, գների և կազմակերպման վերաբերյալ բնակչությանն իրազեկում, այդ թվում՝</p> <p>ա. ՀՀ առողջապահության նախարարության պատճենակազմի կայք էջում տեղեկատվության տեղադրման և պարբերաբար թարմացման միջոցով,</p> <p>բ. բուժհաստատությունների կայք էջերում և (կամ) բուժհաստատություններում այցելուների համար</p>	

1	2	3	4
		<p>տեսանելի տեղերում տեղեկատվության փակցման միջոցով,</p> <p>գ. ԶԼՄ-ների, այդ թվում՝ սոցիալական ցանցերի միջոցով,</p> <p>դ. կլոր սեղանների, սեմինարների, քննարկումների կազմակերպման միջոցով</p>	
	<p>19. Մարզային բժշկական հաստատությունների կառուցում, վերանորոգում և վերազինում առողջապահական համակարգի արդիականացման և օպտիմալացման ծրագրերի շրջանակներում</p>	<p><u>Գյուղական ամբուլատորիաների արդիականացում</u></p> <p>1. 5 գյուղական համայնքներում, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> - ՀՀ Արմավիրի մարզի Ակնալիճ, - ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ, - ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշեն, Նավուր, - ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն գյուղերում նոր ամբուլատորիաների կառուցման ավարտ: <p>2. 1 գյուղական համայնքում ՀՀ Տավուշի մարզի Բերդավան գյուղում, ամբուլատորիայի վերանորոգման ավարտ:</p>	<p>ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ա որոշման հավելվածի 3.4.2-րդ կետ, յոթերորդ պարբերություն</p>

1	2	3	4
		<p><u>Մարզային պոլիկլինիկաների արդիականացում</u></p> <p>3. «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային մասնաշենքի պոլիկլինիկական հատվածի վերանորոգման շինարարական աշխատանքների ավարտ:</p> <p>4. «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքի վերանորոգման շինարարական աշխատանքների ավարտ:</p> <p><u>Մարզային բժշկական կենտրոնների արդիականացում</u></p> <p>5. «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիմնական մասնաշենքի վերանորոգման և կցակառույցի կառուցման շինարարական աշխատանքների ավարտ:</p> <p>6. «Ճամբարակի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի հիմնական շենքի վերանորոգման՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվող շինարարական աշխատանքների մեկնարկ:</p> <p>7.«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն»</p>	

1	2	3	4
		<p>ՓԲԸ-ի նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում:</p> <p>8. «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում:</p> <p>9. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում:</p> <p><u>Բուժհաստատությունների տեխնիկական վերագինում</u></p> <p>10. Մարզային բժշկական կենտրոնների և գյուղական ամբուլատորիաների բժշկական սարքավորումներով ապահովում և կահույքով հագեցում:</p>	
	<p>20. ՀՀ-ում արյունաբանական և ուռուցքաբանական բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման նպատակով միջազգային ցուցանիշներին համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում</p>	<p>1) արյունաբանական կենտրոնի արդիականացման և ռսկրածուծի փոխպատվաստման նոր բաժանմունքի ստեղծման նպատակով կենտրոնի հիմնանորոգման շինարարական աշխատանքների մեկնարկ.</p> <p>2) նոր ժամանակակից ուռուցքաբանական կենտրոնի շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում</p>	<p>ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ա որոշման հավելվածի 3.4.2-րդ կետ, հինգերորդ, վեցերորդ պարբերություններ</p>

1	2	3	4
	21. Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրում	1) միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի փորձնական (պիլոտային) ծրագրի իրականացում. 2) առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման աշխատանքների իրականացման ընթացքում խորհրդատվության տրամադրում և գործառնական աջակցություն. 3) միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման փուլերի սահմանում	ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ա որոշման հավելվածի 3.4.2-րդ կետ, տասնվեցերորդ պարբերություն
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	22. ՀՀ տարածքում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման գործընթացի իրականացում	- ըստ փուլերի Հայաստանի Հանրապետությունում թվային վերգետնյա հեռուստահեռարձակման ցանցի կառուցում, կարգաբերում և գործարկում: Տարածքների համապատասխանեցում թվային համակարգերի ներդրման և շահագործման տեխնիկական պահանջներին	ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 16-ի N 515-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 3.2.7.5-րդ կետ և ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի նիստի N 24 արձանագրային որոշման 24-րդ կետ
	23. Հեռահաղորդակցության ոլորտում ծառայությունների աշխարհագրության ընդլայնում և նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ առաջարկվող ծառայությունների բազմազանության և միջազգային չափանիշներին համապատասխան բարձր որակի ապահովում, մասնավորապես, բնակչության ամնվազն 50 տոկոսի կողմից համացանցի օգտագործման հնարավորության ապահովում	- քննարկումների կազմակերպում ոլորտում գործող օպերատորների հետ, վերջիններիս կողմից համապատասխան գործողություններ իրականացնելու նպատակով բնակչության մոտավորապես 50 տոկոսի կողմից համացանցի օգտագործման հնարավորության ապահովման համար	ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 16-ի N 515-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 3.2.7.5-րդ կետ

1	2	3	4
	<p>24. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 1 (Երևան-Աշտարակ, Երևան-Արարատ), Տրանշ 2 (Աշտարակ-Թալին) շինարարական աշխատանքների կատարման շարունակություն, Տրանշ 3 (Թալին-Գյումրի) մեկնարկ: Տրանշ 4-ի նախապատրաստական աշխատանքներ</p>	<ul style="list-style-type: none"> - Տրանշ 1 և Տրանշ 2 շինարարական աշխատանքների շարունակություն - Թալին - Գյումրի շինարարական աշխատանքներ, Գյումրի – Բավրա և Արտաշատ - Մեղրի հատվածների նախագծում - Տրանշ 4-ի ֆինանսավորման բանակցությունների կազմակերպում 	<p>ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 16-ի N 515-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 3.2.7.3-րդ կետ</p>
	<p>25. Ճանապարհների կառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորում</p>	<ul style="list-style-type: none"> - ճանապարհների պահպանման համար խորհրդատվական մարմնի ստեղծում (ճանապարհային ոլորտը համակարգող խորհուրդ) - ճանապարհների կառավարման համակարգում ընդգրկվող կառուցվածքային միավորների լիազորությունների շրջանակի և կազմակերպչական կառուցվածքի մշակում - ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի ներդրման համար անհրաժեշտ դրամաշնորհային միջոցների ներգրավմանն ուղղված համապատասխան միջոցների ձեռնարկում - 	<p>ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 16-ի N 515-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 3.2.7.3-րդ կետ</p>

1	2	3	4
	26. Հայաստանի Հանրապետության 71,4 E տիեզերական գեոստացիոնար ուղեծրի Հեռահաղորդակցության միջազգային միությունում հայտի գրանցում և ապագա արբանյակի սպասարկման տարածքի համակարգում շահագրգիռ երկրների հետ	- ARMSAT-30B-71.4 E արբանյակային ցանցին հատկացված հաճախականությունների տիրույթների համակարգում շահագրգիռ երկրների կապի ադմինիստրացիաների հետ	ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 16-ի N 515-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 3.2.7.5-րդ կետ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	27. Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների տեխնիկական տվյալների բազայի ստեղծում և շարունակական համալրում առաջնահերթությունը տալով կրթական, մշակութային և մարզական օբյեկտներին	- շենքերի և շինությունների տեխնիկական տվյալների բազայի ստեղծման համար գույքագրման եղանակով շուրջ 2000 շենքերի վերաբերյալ տեխնիկական տվյալների հավաքագրում առաջնահերթությունը տալով կրթական, մշակութային և մարզական օբյեկտներին - հավաքագրված տվյալների վերլուծում, մշակում, ընդհանրացում և մուտքագրում համակարգչային ծրագիր	ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ա որոշում ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի նիստի N 38 արձանագրային որոշում ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի նիստի N 28 արձանագրության N 17 արձանագրային որոշում
	28. Շինարարական նորմերի առաջնահերթ մշակման և վերանայման գործընթացի կանոնակարգում, գնագոյացման նորմատիվային փաստաթղթերի լրամշակման աշխատանքների իրականացում	- վերանայման ենթակա շինարարական նորմերի առաջնահերթությունը որոշելու համար շահագրգիռ պետական կառավարման մարմինների և մասնագիտացված կազմակերպությունների հետ քննարկումների կազմակերպում - քննարկումների արդյունքներով առաջնահերթ մշակման և վերանայման ենթակա շինարարական	ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի հայեցակարգին հավանություն տալու մասին» N 17 արձանագրային որոշում ՀՀ կառավարության 2013 թվականի

1	2	3	4
		<p>նորմերի ցանկի կազմում</p> <ul style="list-style-type: none"> - համապատասխան ֆինանսավորման առկայության պայմաններում շինարարական նորմերի մշակման աշխատանքների՝ սահմանված կարգով իրականացում - գնագոյացման նորմերի մշակման աշխատանքների՝ սահմանված կարգով իրականացում 	<p>մայիսի 16-ի N 515-Ա որոշման հավելվածի 3.2.4.3-րդ կետի չորրորդ և յոթերորդ պարբերություններ</p> <p>ՀՀ վարչապետի 2013 թվականի հունիսի 20-ի N 483-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 28-ի նիստի որոշում</p>
	<p>29. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող կիսակառույց և չհահագործվող շենքերի ու շինությունների հաշվառման շտեմարանի ստեղծում և առաջարկությունների ներկայացում շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու և մասնավոր հատվածի կողմից շինարարությունը ժամկետին ավարտելու հետ կապված պարտավորությունները չկատարած սուբյեկտների նկատմամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ</p>	<ul style="list-style-type: none"> - պետական և համայնքային սեփականություն հանդիսացող կիսակառույց և չհահագործվող շենքերի և շինությունների հաշվառման շտեմարանում ներառվող անհրաժեշտ տեղեկատվության ճշգրտում և հավաքագրում - շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու և մասնավոր հատվածի կողմից շինարարությունը ժամկետին ավարտելու հետ կապված պարտավորությունները չկատարած սուբյեկտների նկատմամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում 	<p>ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ա որոշում</p> <p>ՀՀ վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 02/23.12/17397-13 հանձնարարական</p>
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>30. Հանրակրթության արդյունավետության բարելավում</p>	<ul style="list-style-type: none"> - նոր ուսումնական ծրագրերով դասագրքի փորձարարական աշխատանքների իրականացում - հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման մեթոդաբանության 	<p>«ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ</p>

1	2	3	4
		<p>լրամշակում և ներդրում երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանն անցում Հայաստանի Հանրապետությունում ուսումնական համակարգիչների արտադրության զարգացման հայեցակարգից բխող գործողությունների ժամանակացույցի մշակում «Ազգային երգ ու պար» առարկայի չափորոշիչի և ծրագրի մշակում և հաստատում</p>	<p>օրենքի (ՀՕ-246-Ն) 7-րդ գլխի 7.1-ին ենթաբաժին «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված ՀՀ կառավարության 2012 թ. նոյեմբերի 15-ի նիստի N 46 արձանագրային որոշման 1.2.4-րդ կետ</p>
	<p>31. Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար դպրոցներում ուսումնական բազայի բարելավում և կադրերի մասնագիտական զարգացում</p>	<p>ազգային փոքրամասնությունների դպրոցների համար 2 անուն դասագրքերի տպագրություն (քրդերեն) ազգային փոքրամասնությունների դպրոցների շուրջ 20 ուսուցիչների վերապատրաստում</p>	<p>ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 16-ի N 515-Ա որոշման հավելվածի 3.4.3-րդ ենթաբաժնի 7-րդ կետ</p>
	<p>32. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում</p>	<p>ՀՀ մասնագիտական կրթության և ուսուցման գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպման մեխանիզմների մշակում և փորձնական ներդրում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների վերապատրաստման և հավաստագրման համակարգի ներդրում մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգի ստեղծում 12 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի մանկավարժների վերապատրաստման նոր մեխանիզմների մշակում և փորձարկում</p>	<p>«ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-246-Ն) 7.2.1-ին ենթաբաժին ՀՀ կառավարության 2012 թ. հուլիսի 4-ի N 27 արձանագրային որոշմամբ հաստատված ժամանակացույցի 2-րդ կետ</p>

1	2	3	4
	<p>33. Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի զարգացում և արդյունավետության բարձրացում</p>	<p>որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) ներդրման գործընթացից բխող մասնագիտությունների ցանկի և շնորհվող որակավորումների վերանայում</p> <p>որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրիչների մեթոդաբանության մշակում</p> <p>բարձրագույն կրթության համակարգում առկա սոցիալական խնդիրների վերհանում և վերլուծություն, տարբեր սոցիալական խմբերին ուղղված ուսման վարձի փոխհատուցման մեխանիզմների ընդլայնում, անվճար կրթության ընդլայնում</p> <p>բարձրագույն ուսումնական հաստատությունների փորձնական վարկանիշավորում, ներկայացված տվյալների ճշգրտում, վերլուծություն և ամփոփում, վարկանիշավորման չափանիշների լրամշակում</p> <p>պետական 10 բուհերում դրամաշնորհային նորարարական ծրագրերի իրականացում, մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ներդրում</p>	<p>ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 16-ի N 515-Ա որոշման հավելվածի 3.4.3-րդ ենթաբաժնի 3-րդ և 12-րդ կետեր</p> <p>ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1230-Ա որոշման հավելվածի 5-րդ կետ</p>
	<p>34. Հակակոռուպցիոն համալիր ծրագրի ներկայացում</p>	<p>կրթության և գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թվականների միջոցառումների համալիր ծրագրի մոնիթորինգ և միջոցառումների իրականացման արդյունքների մասին պարբերական հաշվետվությունների ներկայացում</p> <p>կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի մասին վերլուծական հաշվետվությունների հրատարակում և ներկայացում հանրային քննարկման կրթության ոլորտի հակակոռուպցիոն համալիր ծրագրի նախագծի մշակում և ներկայացում հանրային քննարկման</p>	

1	2	3	4
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	35. Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության գյուղատնտեսության ոլորտին առնչվող միջոցառումների իրականացում	<p>գյուղատնտեսության աջակցության միասնական կանոնների մասին համաձայնագրում համապատասխան փոփոխությունների կատարման հետ կապված առաջարկությունների ներկայացում</p> <p>գյուղատնտեսական ծագում ունեցող ապրանքների, գյուղատնտեսությունում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, որոնց նկատմամբ անցումային ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունը կկիրառի Մաքսային միության միասնական մաքսային դրույքներից տարբերվող մաքսատուրքեր</p> <p>ԱՀԿ-ին անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից գյուղատնտեսության պետական աջակցության մասով ստանձնած պարտավորությունների վերանայման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում</p>	-
	36. Հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացում	<p>գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծության և սերմնապահովության ծրագրերի իրականացում</p> <p>տոհմային անասնաբուծության զարգացման ծրագրերի իրականացում</p> <p>արդյունագործական ձկնաբուծության արտադրության և արտահանման խթանում (արտահանող ընկերությունների ցանկի ընդլայնում, եվրոպական չափանիշներին համապատասխանող տեխնոլոգիաների ներդրման խորհրդատվական աջակցություն, թառափազգիների</p>	ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշման N 1 հավելվածի IV բաժնի 39-րդ կետի 3-րդ ենթակետ

1	2	3	4
		<p>մանրաձկան տեղական արտադրության տեխնոլոգիայի ներդրում)</p> <p>1. գյուղատնտեսական ուղղվածության կոոպերատիվների ձևավորման պիլոտային ծրագրի իրականացմանն աջակցություն</p>	
	37. Մանրամթերքի անվտանգության համակարգի զարգացում	<p>սննդամթերքի անվտանգության օրենսդրական դաշտի բարելավումը, Հայաստանի կենդանական ծագում ունեցող սննդի և անասնակերի անվտանգության վերահսկման հզորացումը</p> <p>ԹՎԻՆԻՍԳ ծրագրի շրջանակներում կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության վերահսկման պրակտիկայի արդիականացում համակարգը միջազգային չափանիշներին համապատասխան ներդրման առումով</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Հանրապետական անասնաբուժական, սանիտարական և բուսասանիտարական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի արդիականացում, անձնակազմի ուսուցում և վերապատրաստում</p> <p>մնացորդային մոնիթորինգի ծրագրի ներդրում</p>	ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 16-ի N 515-Ա որոշման հավելված 1-ի 3.2.4. բաժնի 3.2.4.2 ենթաբաժնի 13-րդ մաս
	38. Անասնապահության մասնագիտացում ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ գյուղական համայնքներին աջակցության շարունակում	<p>հեռագնա արտոնների անցանելիության ապահովմանը, ջրարբիացմանը, արտոնների վերականգնմանը, կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծմանն ուղղված միջոցառումների շարունակում</p> <p>համայնքներում ստեղծված արտոգտագործողների սպառողական կոոպերատիվների</p>	ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշման N 1 հավելվածի IV բաժնի 39-րդ կետի 10-րդ ենթակետ

1	2	3	4
		<p>կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների շարունակում ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերում համապատասխան սարքավորումներով հագեցված անասնաբուժական սպասարկման կենտրոնների հիմնում դաշտային կերարտադրության զարգացման, տոհմային և անասնաբուժական աշխատանքների բարելավման միջոցառումների իրականացում հանրապետության այլ համայնքներում նման ուղղվածության ծրագրի իրականացում</p>	
<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն</p>	<p>39. Հայաստանի Հանրապետությունից ձկան, ձկնամթերքի և ջրային ծագում ունեցող այլ արտադրանքի՝ Եվրամիության երկրներ արտահանման գործընթացը կանոնակարգող միջոցառումների կազմակերպում և իրականացում</p>	<p>ձկան, ձկնամթերքի և ջրային ծագում ունեցող այլ արտադրանքի՝ Եվրամիություն արտահանման համար օրենսդրական դաշտի մշակում ձկնաբուծության ոլորտում մակաբուծային հիվանդությունների գնահատում և հաշվետվությունների ներկայացում ձկների, ձկնամթերքի և ջրային ծագում ունեցող այլ արտադրանքի մանրէային և վիրուսային հիվանդությունների նկատմամբ փորձաքննության իրականացում կենդանական ծագում ունեցող սննդամթերքում անասնաբուժական դեղամիջոցների և էկոլոգիական աղտոտիչների առավելագույն քանակները սահմանող՝ ՀՀ կառավարության չափորոշիչների համապատասխան փորձաքննության անցկացում</p>	<p>ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 16-ի N 515-Ա որոշման N 1 հավելվածի 3.2.4-րդ բաժնի 3.2.4.2-րդ ենթաբաժնի 7-րդ մաս</p>
	<p>40. Հայաստանի Հանրապետության մարզերում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և անձնագրավորման</p>	<p>- Հայաստանի Հանրապետության մարզերում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման առկա, կանխատեսվող գլխաքանակի և պահանջվող ականջի պիտակների հաշվառում</p>	<p>ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 17-ի նիստի N 45 արձանագրային որոշման 5.3-րդ կետ</p>

1	2	3	4
